սարակութիւնը ինչպէս ջերմ սիրով և ուրախութեամբ հիւրընկալեց իւր ծերունի Հայրապետին, այնպէս եւս չզլացաւ նիւթապէս այդ ապացուցանելու, նուիրելով 12 հազար ռուբլի դրամ, 2000ր. երկաթուղու ծախք, իսկ 10 000ն Էջմիածնայ Նորոգութեան համար։ (Այս մասին տես յերես 131, 134 և 135)։

Զորեքշաբթի Վեհափառը այցելեց Բագուի Ազքատանոցն[1]), և հանդիսով օրհնեց զայն և բանախօսութեամբ գովեց բարուեցուց. ասելով որ՝ Բագուի ժողովուրդը յիրաւի արժանի է իւր համբաւոյն։ Երեկոյեանը Վեհափառ Տէրը հրամայեց պատրաստութիւն տեսնել ճանապարհորդելու դէպի Էջմիածին, և ահա ամենայն ինչ պատրաստ էր. Լալայեանցի տնից, ուր իջեւանել էր Վեհափառը, մինչ երկաթուղու կայարանը վառուած էին ջահեր, ճանապարհը այդպիսով լուսաւորուած էր սքանչելի կերպով. իսկ եկեղեցեաց զանգակների զօղանջիւնը հրաւիրում էր հայերին ի հանդէս. մարդ զգում էր, որ գտնվում է արտակարգ հոգեկան դրութեան մէջ։ Եկաւ երեկոյեան 8 ժամը. յիշեալ տան առաջ ասեղ գցելու տեղ չկար բազմութեան ձեռից այս բառի բուն նշանակութեամբ։

Բազմահարուստ ամբոխը բաղկացած զանազան ազգերից խառնուել էր այս տեղ։ Փողոցի մէջ Վեհափառի համար նշանակուած կառքի շուրջը պատել էին տեղւոյս դպրոցների հայ աշակերտները — մեր ապագայ յոյսերը, իրանց համազգեստներով որք քաղցրանուագ երգում էին «Հնչեսցեն լարք» երգը. և փոքր ինչ անցած՝ երեւեցան 2 Խաչաբարձ քահանաներ, ապա բոլորից շրջապատած Նորին Վեհափառութիւնը, որին տեսնելով բազմութիւնը թնդացրեց օդը. «Կեցցէ Հայոց Հայրապետ» աղաղակելով։

Կաթուղիկոսի կառքը շարժուեց յառաջ գնալ. Նորան հետեւեցին բազմաթիւ կառքեր, իսկ հետիոտս գնացող ամբոխին թիւ չկար։ Կայարանում արտաքոյ կարգի գնացքը 15 ռոպէի չափ ուշացաւ. այդ միջոցում Վեհափառը կայարանի արքայական սենեկում հանգստանալով՝ իւր գոհունակութիւնը յայտնեց բոլոր առաջնակարգ իշխանաւորաց ներկայ գտնուողներին. բոլոր օտա-

[1]) Որոյ շինութեան արձանագիրն, տես գրքիս 381 և 382 երեսներն։